ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2025թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ԿԱՏԱՐՍԻՍ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով,

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն քանդակագործ Արմենուհի Հովսեփյանի հեղինակած «Կատարսիս» քանդակը Երևան քաղաքի Կարապի լճի հարակից տարածքում տեղադրելու համար՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի մարտի 18-ի
N --- Ա որոշման

Կարապի լճի հարևանությամբ, Թումանյան փողոցի կողմից

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ԿԱՏԱՐՍԻՍ» ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարանի կողմից 2023թ. իրականացված «Երևանը կանանց համար» ծրագրի շրջանակում քանդակագործություն անվանակարգում հաղթող է ճանաչվել Արմենուհի Հովսեփյանը՝ «Կատարսիս» քանդակով: Իրականացված նախագիծը նպատակ ուներ խրախուսելու կին արվեստագետների ստեղծարարական ծրագրերը՝ վերջիններին մշակութային կյանքում ինքնադրսևորման հնարավորություն տալով: Հատկանշական է, որ Երևան քաղաքում հատուկենտ քանդակներ են առկա, որոնք իրականացվել են կանանց կողմից: Հետևապես, «Կատարսիս» քանդակի տեղադրումը միտված է քաղաքի մշակութային կյանքի աշխուժացման գործում տաղանդավոր կին արվեստագետների դերի ընդլայնմանը և իրենց ստեղծագործությունների հանրահռչակմանը:

Արմենուհի Հովսեփյանը ծնվել է 1979 թ. փետրվարի 12-ին Երևանում: Ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը (2017 թ.), այնուհետև 2018-21 թթ. ուսանել է Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստի ֆակուլտետում, իսկ 2021-2023 թթ. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ ստանալով մագիստրոսի աստիճան: Կարևորելով տաղանդավոր արվեստագետի արժանվույն գնահատման, ստեղծագործական ժառանգության արժևորման և հանրահռչակման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ